

Հանրագիտական հանրագիտական հանրագիտական



Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ

Հ Ա Ն Դ Ե Ս

Տ Ա Ս Ն Օ Ր Ե Ա Յ

Գիտական, Գրագիտական, Արուեստագիտական,
Եւ Մանկավարժական



1901 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1 — ԹԻԻ 5

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՆԱՆ



ՀԱՆՐԱԳԻՏ
ՏԱՍՆՕՐԵԱՅ

— هانراكيداق —
مجموعه علوم

HANRAKIDAGUT

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 5

1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1901

ՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Ո՛րչափ կը սիրե՛ք դիտել խրնդագին
Տրդա՛ք, պատկերները ձեր գիրքերուն
Ու ձեր հանդեսին — Հանրագիտակին —,
Ա՛յնքան հրմայֆոս, աղուռ ու սիրուն:

Պատկերներ՝ ծովուն, երկրի, երկրնի,
Դաշտին ու հովտին, հրակայ լեռներուն,
Վարդ Արշալոյսին՝ որ կը բլրբլկի՛,
Իրիկամուտին՝ նրա՛յ, մարմրո՛ւն:

Պատկերներ՝ Գարնան՝ գողտրիկ՝ ու ծիծղուն,
Ուր ամեն ինչ բո՛յր է, ե՛րգ ու քրքռո՛ւմ.
Ո՛ւր գառն ու մանկիկ, քիթեռն ու մեղուն
Կը խայտան անփոյթ, անմեղ, անդադրում:

Պատկերներ՝ Ամրան շողուն, արեգօքեր,
Մեղանու Ասեան ու Զմրան ցրտին,
Դիտեն ուշադիր ձեր փարփառ աչեր,
Ա՛յնքան սիրելի ձեր մասաղ սրտին:

Արեւ ու լուսին, լոյսեր, մոլորակ,
Անե՛ք կը փայլին ձեր գրքին ծոցիկ,
Շրջան ընկով ձրւադ, բոլորակ,
Կը լուսագրծեն ծիրեր գեղեցիկ:

Վարդ, յասմիկ, միխակ, շուշան ու սրմբուլ
Ձեր ամուներուն մէջ քրդքեայ բընուշ,
Ամառ ու ձմեռ կը փրփրին բոլ բոլ,
Բուրե՛լ ծաղիկներ. անքառամ, անփուշ:

Ձեր նուրբ քղբահիւս բոյներուն մէջեն՝
Սարեկներ երբեք չեն գաղթեր հաւառ,
Այլ ցորեկ գիշեր մեղմիկ կը մնչեն,
Տուներնիս դրա՛խս մ'ընելով իրա՛ւ:

Բրնուքեան այս չրքնաղ պատկերներն անքիւ
Ո՛րքան կը սիրե՛ք դուք, գիտե՛մ, սրտա՛նց,
Մի՛շտ կը գուրգուրաք անոնց վրայ խանդիւ,
Ձեր հրնուանքն, հանոյքն են անոնք, ձեր գա՛նձ:

Բայց, կա՛յ ամենե՛ն աւելի չրքնա՛ղ,
Մաքուր որ փայլուն, մոգիչ ու վրսե՛մ
Պատկեր մը զոր դուք պարտիք սիրել նախ,
Անարա՛ս պահել, — ո՛րն է, ձեզ բտե՛մ —

Ձեր անմեղութեան պատկերն է անի,
Պատկեր աննրման, մանկութեան անլի՛շտ.
Երկնի ցոլացումը ջի՛նջ, գեղանի՛
Իցի՛ւ, զայն անբի՛ծ պահե՛իք դուք մի՛շտ.

Ա. Կ. ԿԻՂԻՆԿԵԱՆ

ԺԱՆՈՐԹ

ԿԱՄ

ԲԱՂԴԻՆ ԺՊԻՏԵ

(Շարունակութիւն հախորդ թիւ 66)

Իսկոյն ճպուռը սքանչելի երգ մը երգեց կարծես թէ մեծ օրէնայի երգիչներէն մին կ'երգէր: Վաճառականը՝ որքան որ վաճառական էր, նախ չկրցաւ կրած տոպաւորութեանը անդգայ մնալ: Աղդեցութիւնը անխուսափելի էր: Բայց առաջին նուագէն վերջը խելքը գլուխը եկաւ եւ բնական ներկարագրին տէր եղաւ:

— Տղա՛ս, ըսաւ, ահա շատ հետաքրքրաշարժ միջատ մը, բայց իմ ուզածս ձի մըն էր եւ դուն ինծի ճպուռ բերիր: Այս անգամ ինչպիսի տաղանդաւոր ալ ըլլայ, նախնիք որչափ տաղանդաւոր ալ ըլլայ, չպիտի կրնամ կառքիս լծել: Մինչեւ ե՞րբ այս սխալումներդ: Գէթ այս անգամ չպիտի յանդիմանեմ քեզի: Ինծի տուր այդ ճպուռը, Սէյլանի իշխանին պիտի ծախեմ չինական գանարիկի մը փոխարէն, եւ, ատկէ չահելիք ստակովս, մէկի տեղ վեց ձի կ'ուենամ:

Բայց Ժանօթ՝ հակառակ հօրը թախանձանքին՝ իր ճպուռը բնաւ ձեռքէ հանել չուզեց: Հայրը ի գուր բարկացաւ եւ ըստառնալիքներ քրաւ, մեծ փոթորիկ փերթաւ տան մէջ, բայց յետոյ խաղաղեցաւ:

Երրորդ անգամ ըլլալով վաճառականը իր ուղին փորձել ուզեց եւ քաղաք զրկեց տակաւ մը լաւ գինի գնելու: Իր ծննդեան տարեգարձը տօնելու համար ցայգահանդէս մը պիտի տար, որուն հրաւիրուած էին ամէն դասակարգէ բազմաթիւ բարեկամներ: «Լաւ ըմբռնէ, ըսաւ Ժանօթին, պաշտօնիդ կարեւորութիւնը: Աղէկ թէ գէշ, ըրածիդ համեմատ կ'ամ բոլոր համարումս պիտի ստանաս կամ կորսնցնես առ յաւիտ եւ պիտի անպատուութիւն հասարակութեան առջեւ:»

Ժանօթ հազար ու մէկ երդումներ ըրաւ խոստմնադրանց չդրնուելու հաստատամտութեամբ: Դժբաղդաբար միշտ այն անտառէն անցնելու պէտք ունէր: Նախապզոյշութեամբ միտքը դրաւ որ անկէց անցած անոն պզտիկ ձայն մը առնելուն պէս փախի:

Աղբիւրին մօտենալուն սիրտը ուժգին տրոփել սկսաւ, հարիւր սկուանոց քսակը ամուր կերպով կը սեղմէր կուրծքին վրայ: Աչքն ու ականջը խփած աղբիւրին քովէն անցնելու վրայ էր գրեթէ, երբ յանկարծ, ճամբուն մէկ դարձուածքին անկիւնը կ'ինը դէմն ելաւ մատին վրայ մամուկ մը առած որուն կաքաւելը կը դիտէր ուշի ուշով: Այս



կենդանիին իր դերձանի նման երկայն բարակ ու դիւրարեկ սրունքներուն վրայ տատանիլն ամենէն զարմանալին էր. թաթիկները մէջքը՝ ետեւ առաջ անանկ պալանսներ կ'ընէր զոր կը ճայթէիր խնդալէդ, յետոյ բոլորովին խեղկատակ ոստումներ կ'ընէր, շատ լաւ կը կատարէր մարմնամարդներու վտանգաւոր փորձերը, գորտի ոստումը, խաչածեւ կաքաւ, սահիլ եւայլն, որոնց ամէնուն մէջտեղ փոքրիկ պարապոյ միջոց մը կը թողուր ճշդապահութեամբ, այնպէս որ մարդ կ'սքանչանար:

Կախարդ կ'ինը կը մարմնէր խնդալէն. Ժանօթ ալ՝ որ մամուկին բոլոր խաղերը կը դիտէր՝ կը խնդար կողերը սեղմելով:

Այս դուարթութիւնը կարծես չարածիկ մամուկին աւելի քաջալերութիւն կուտար, այնպէս որ կը բարձրանար, կ'իյնար, կը ցատկէր, կը թաւալէր, վերջապէս հագարումէկ հիացուցիչ ձեւեր կ'ընէր: Այն ատեն Ժանօթ «Ո՛չ գինի, ո՛չ ալ ուրիշ ըմպելի մը կրնայ գտնուիլ որ այս մամուկին չափ զուարճացնէ», ըսաւ ինքնիրեն: Հինգ վայրկեան վերջ, սակարկութիւնը եղած էր, եւ Ժանօթ տուն կը վերադառնար դուարթագէտ՝ իր հօրը հրաւիրեալները դուարճացնելու յուսովը պարարուած: Զիչդ այն վայրկեանին տուն հասաւ ուր կոչնականները սեղան նստելու վրայ էին: Զառի ատեն ամէն ինչ կարգին էր, խի աղանդերի Ժամանակ վաճառականը խոսք առաւ. «Պարոնայք, ըսաւ, հիմա պիտի ճաշակէք մեր

գիւղի տօնավաճառէն եկող շատ համեղ գինին՝ որչափ սուղ է և զոր նոյն ինքն տղաս գնեց: Ասկէց պիտի դատէք թէ կը ճանչ-



նա՞յնդեր թէ ոչ: Օ՛ն, ժանօթ քերածէդ հրամցուր մեղի: »

Ժանօթ ոտքի ելաւ իր կարգին ճուռմարանելու համար. « Պարոնայք, բոսա հիւրերուն, հիմա խմեցիք ամենաճնտիր գինի մը, եւ կրնաք տակաւին խմել կշապինդ, վասն զի հօրս մառանը լեցուն է: Սակայն գինիէն աւելի հազուագիւտ խնջոյք մը պատրաստած եմ՝ ձեզի զոր ընդհուպ պիտի վա-



յելէք: Պնակ մը տուէք ինձ: Այս պնակին վրայ, պարոնայք, մամուկի մը կատարելիք ամենադժուար ու ամենանորածեւ պարերուն հանդիսատես պիտի ըլլաք. նայեցէք հիմա « Բառապօ »: »

Այս ճառախօսութեան յաջորդող աղմուկը այնչափ սոսկալի եղաւ որ մամուկը վախէն պնակէն դուրս ցատկելով տիրոջը դուրս պանը ապաստանեցաւ: « Քառապօ » ըսելով մեզ կը ծաղրէ՞ կոր, կ'ըսէին ոմանք: — Զգեցէ՛ք, կ'ըսէին միւսները, մամուկին կաքաւելը պէտք է տեսնենք: » Օրիորդները կը մարմնէին: Այս կատակերգութեան մէջ, վաճառականին ձայնը ամէն շնկոց խափանեց: « Ա՛հ, գարշելի տղայ, տակաւին ինծի կը խափես: Այս երրորդ անգամն է, պարոնայք, բայց ա՛րվեր ջինն է. կորսուէ՛ աչ-

քիս առջեւէն, դո՛ւրս ելիր տնէս որ ոսկե-ջորեակներով, ճպուռներով եւ մամուկներով լեցուցիր. գնա՛, անիծեալ արարած: » Եւ ասոր վրայ ոսկեղէն կոնք մը նետեց գըլխուն: Բարեբաղդաբար հարուածը չեղեցաւ, ապա թէ ոչ Ժանօթի գործը լմացած էր: Ժանօթ դուրս ելաւ սրահէն, եւ, մինչդեռ կոչնականք կը ջանային հօրը բարկութիւնը իջեցնել որ տղան պատժել կ'ուզէր. ան իր սենեակը մագլցեց եւ իր միւս երկու անասնիկներն ալ առնելով դուրս ելաւ շուտով:

[Շար.]

Թարգմ. ԿԱՐԱՊԵՏ ՏԵՄԻՐԵԱՆ



ՔԱՆՆԻԹՅԵՐՇԹԱՆ

Մարդ՝ եթէ ուզէ, ամէն որ առիթ ունի, ամէն երկրաւոր իրաց անհաստատութեան վրայ խորհրդածելով, իր վիճակէն գոհ ըլլալ, թէպէտ և պատրաստ խորոված լուրամարգիներ իր բերանը չիյնան:

Գերմանացի վաճառականի գործակատար մը՝ իրեն գործ ճարելու յոյսով Ամսդերտամ քաղաքն եկաւ:

Երբ շատ փառաւոր տուններով, ծովածուփ նաւերով եւ գործունեայ մարդերով լի այս խոշոր ու հարուստ վաճառաշահ քաղաքն հասաւ, նախ եւ առաջ աչքին մեծ ու դեղեցիկ տուն մը զարկաւ, որուն նման իր ճամբորդութեան ժամանակ թուրքիկէնէ մինչեւ Ամսդերտամ տեսած չէր. մեծ զարմացմամբ չքեղ շէնքն, անոր տանիքին վրայ գտնուած վեց ծխնելոյզներն, գեղեցիկ աշտարակներն ու բարձր պատուհաններն՝ որոնք իր հօրը տան դռնէն աւելի մեծ էին, երկայն ատեն դիտեց: Վերջապէս ինքզինքը չկրցաւ բռնել հետաքրքրութենէն եւ անցորդի մը հարցուց. « Բարեկամ, կրնա՞ք, ըսել ինձ, ի՞նչպէս կը կոչուի այն պարոնն, որուն կը վերաբերի այս սքանչելի տունը, որուն պատուհանները կախաչներու, չուշանածաղիկներու եւ շահպարակներու թաղարներով լեցուն են: » Իսկ անցորդն, որ մեծամտութիւն ծախել կ'ուզէր, դժբաղդաբար այնքան լաւ կը հասկնար գերման լեզուէն, ինչպէս հարցնողը հոլանտերէնէ,

այսինքն երկուքն ալ իրարու լեզուէ չէին հասկնար։ Ուստի բրտութեամբ մը ըսաւ։ ՔաննիքՖեբրայն, եւ տրտուալով հեռացաւ։ Ասիկա մէկ կամ երեք հոլանտերէն բառ էր, որ սաղէս կը թարգմանուի։ « Ես ձեզ չեմ կրնար հասկնալ »։ Բայց միամիտ օտարականը կարծեց թէ ՔաննիքՖեբրայն իր հարցուցած տանտիրոջ անունն էր։ « ՔաննիքՖեբրայն » պարոնը մեծատուն մը ըլլալու է, կը խորհէր ինքնիրեն եւ ճամբան շարունակեց։

Փողոցներէ ներս դուրս մտնելով ելլելով՝ վերջապէս ծովու խորը մը հասաւ, որ « Զէթէյ » կամ գերմաներէն « Իփսիլոն » կը կոչուի։ Հոն բազմաթիւ նաւեր քովէ քով շարուած էին եւ չէր գիտեր թէ ինչպէս երկու աչքերը բաւական պիտի ըլլան բոլոր այս հրաշալիքները տեսնելու եւ գիտելու։ Այս միջոցին խոշոր նաւ մը իր ուշադրութիւնը գրաւեց որ քիչ մ'առաջ Արեւելեան Հնդկաստանէն հասած էր հոն եւ ապրանք կը պարպէր։ մէկզմէկու վրայ կարգաւ սնտուկներ եւ հակեր կը կենային հողին վրայ։ Եւ միշտ շաքարի, խահուէի, բրինձի եւ պղպեղի պարկեր շոգենաւէն դուրս կը գլորէին։ Երկայն ատեն գիտելէն ետքը, վերջապէս հարցուց մէկուն, որ ուսին վրայ սնտուկ մը առած դուրս կը բերէր։ « Ինչպէ՞ս կը կոչուի այն երջանիկ մարդն, որուն կը բերէ ծովն բոլոր այս ապրանքները։ » — ՔաննիքՖեբրայն, պատասխանեց բեռնակիրը։ Այն առեւ մտածեց, « Այս տեղ հրաշք չկայ, որու որ ծովն այսպէս հարստութիւն կը բերէ, հարկաւ անիկա անանկ չքեղ ապարանքներ կ'ունենայ աշխարհի մէջ եւ պատուհաններու առջեւ ալ ոսկեզօծ թաղարներու մէջ գեղեցիկ կռկաջներ։ »

Կրկին ճամբան յառաջ տարաւ եւ մտքին մէջ հազարումէկ տխուր խորհրդածութիւններ ծնունդ կ'առնէին թէ « Ի՞նչ կ'ըլլար աղքատ մարդ մը այնքան հարուստներով լի աշխարհի մը մէջ » բայց երբ այսպէս կը մըտածէր « Երբ անգամ մը այսքան հարուստութեան տէր ըլլամ, ինչպէս այս ՔաննիքՖեբրայն պարոնն ունի », յանկարձիկ զոյգի անկիւն մը եկաւ եւ նշմարեց յուզարկութեան մեծ թափուր մը։ Չորս սեւաւզեցող ձիեր կը քաշէին կամաց կամաց սէ հանդարտ քայլերով մեռելակառք մը

որ մեռեալ մը իր վերջին հանգստարանը կը տանէր։ Ննջեցեալին բարեկամներու երկայն շարք մը կառքին ետեւէն կ'երթար, զոյգ առ զոյգ, սեւ վերարկուներ հագած եւ լուռ ու մունջ էին, իսկ հեռուէն զանգակին տխուր ձայնը կը հնչէր։ Թախծագին զգացում մը պատեց մեր օտարակամն ու մեռելակառքին հետեւողներէն աւելի տրտում կերպարանք մը առաւ։ Բարեպաշտութեամբ գլխարկը ձեռքերուն մէջ կեցաւ, մինչեւ որ յուզարկաւորներն անցան, ինքն ալ անոնց ետեւէն դնաց, ու հանդարտութեամբ կը խորհէր թէ ի՞նչ կրնար շահիլ իր բամբակէն, եթէ կենդինարը քսան մարքի բարձրանար։ Յուզարկաւորներէն մէկուն մօտենալով զգուշութեամբ անոր վերարկուին քղանցքէն քաշեց եւ անկէ թողութիւն խնդրելով ըսաւ։ « Ինչ է ննջեցեալին անունը, հարկաւ անիկա ձեր ազնիւ բարեկամներէն մէկն էր, որու յուզարկաւորութեան ալ ներկայ գլորնուեր էր։ » — ՔաննիքՖեբրայն, պատասխանեց, մարդը։

Այն ատեն արցունքի խոշոր կաթիլներ հոսեցան մեր բարի թուփլինկէցիին աչքերէն։ Նախ եւ առաջ շատ դժարն եկաւ այս լուրը, բայց վերջը սիրտը հանդարտեցաւ։ « Խեղճ ՔաննիքՖեբրայն, կը հառաչէր, քու ամբողջ հարստութենէդ ի՞նչ ունիս հիմա, պատանք մը միայն, եւ բոլոր քու գեղեցիկ ծաղիկներէդ թերեւս պաղ կուրծքիդ վրայ խնկունի մը կայ։ » Այս սրտածմլիկ մտածումներով դադարին ընկերացաւ մինչեւ գերեզման, իբրեւ թէ ննջեցեալին բարեկամներէն մին ըլլար, տեսաւ եւ թաղրեալ պարոն ՔաննիքՖեբրայնին իր վերջին հանգստարանն իջնելը, եւ հոլանտերէն դամբանական քարոզէն, որ մէ բառ մը չէր հասկընար, շատ աւելի յուզուեցաւ, քան թէ գերմաներէն լեզուաւ քարոզներէ, որոնց շատ անգամ ունկնդրած էր։

Վերջապէս միւս մարդոցը հետ դուրս ելաւ գերեզմանատունէն, գերմաներէն լեզուն հասկցող պանդոկ մը դնաց, ուր լաւ ախորժակով խմորակեան պանիրով հաց կերաւ։ Եւ եթէ իրեն ու եւ է բան մը դժուար կուգար՝ այսինքն՝ այնքան մարդիկ աշխարհի մէջ հարուստ ըլլան եւ ինք աղքատ ու խեղճ, միայն Ամսդերտամի պարոն ՔաննիքՖեբրայնի եւ անոր մեծ տունին, անոր հարուստ նաւերուն եւ անոր նեղ գերեզմանին վրայ կը մտածէր։

Ա. ԱՐԴՈՒԿ

ԱՆՈՒՅՈՒՆ (1)

ԽԱՂՈՂԸ

(ԱՌ Մ. ԱՃԵՄԵԱՆ)

Ազգիւրի՛ն վերեւ ընկողմանած լուռ՝
Ի՛նչ քաղցր է դիտել խաղողին կուգեր.
Ո՛չ մէկ բան, նոյն իսկ հոյն ախորժալուր՝
Հեշտանքով այնքան չեն իմ միտք յուշեր.

Երանապարգեւ օրհնալի՛ց խաղող,
Դո՛ւն ես մեր տրտում սիրտեր խաղաղող:

Ամառ ու ձմեռ, մերկ՝ անանկողին,
Յողաթո՛ւրմ՝ այգուն պայծառ չողերով.
Ինչպէ՛ս ալ աղուոր, թա՛րմ կը փողփողին՝
Աչքերըդ մեղուչ ու երկնադորով.

Երանապարգեւ օրհնալի՛ց խաղող,
Դո՛ւն ես, դո՛ւն՝ այրած սիրտեր խաղաղող:

Գեղով ու գոյնով ո՞ր աջ հրաշարուեստ
Քեզ այդպէս է ճոխ նըկարակերտեր,
Ալ քեզ ո՞վ չիտար ներբող ու գովեստ,
Երբ անցոյց չըքով օծտեր է քեզ Տէր:

Երանապարգեւ օրհնալի՛ց խաղող,
Դո՛ւն ես, դո՛ւն՝ ցաւած սիրտեր խաղաղող:

Անծակ մարգարիտ — մարմնիկըդ խաժակ —
Ձերդ քողածածուկ հարս մը բիւրեղեայ,
Ափին մէջ սեղմած՝ ոսկեղէն բաժակ՝
Փաղփուռներու մէջ վէտ վէտ կը շողայ.

Երանապարգեւ օրհնալի՛ց խաղող,
Դո՛ւն ես վըշտահար սիրտեր խաղաղող:

Համիդ ու հոտիդ՝ աճէն սիրտ գերի,
Վա՛րդն է քեզ տըւեր իր շող ծիրանի.
Ու մեղուն՝ չորս գիդ յար կը դեգերի՝
Անձկո՛ւտ՝ քեզ տալով հազար երանի.

(*) Այս անունով կը ճանչցուի խաղողը, որ իր քաղցրութիւնովն ու համեղութիւնովն անհաւասարելի համարուած է միշտ իրաւամբ՝ ամէնէն փափկամաշ սկի քիմքերէ. Ալիշար՝ Մարաշու հարաւարեւելեան կողմը՝ ընդարձակ զիւղախումբ մըն է, ամբողջովին խաղողի այգիներով ծածկուած՝ իբր 15-20 ժամու տարածութեամբ փռուած պարստ հողի մը վրայ: Ոչ մէկ խօսքով կարելի չէ որակել ազնուութիւնն այս անմահ խաղողին. Մօտէն անձամբ պէտք է ճաշակել զայն, զաղափար մը կազմելու համար համին ու հոտին վրայ, անոր՝ որ ճրագի պէս փառ փառ կը վառի առաջին ականակով:

Երանապարգեւ օրհնալի՛ց խաղող,
Դո՛ւն ես վըշտաբեկ սրտեր խաղաղող:

Սո՛ւտ աշխարհիս վրայ դուն մեզ կուտաս, դուն
Անմահ գինիին հոյգն երանական,
Ու տարուէ տարի ժա՛մն ալ եռանդուն՝
Քեզի կ'ընծայէ խունկ ու շարական,

Երանապարգեւ օրհնալից խաղող՝
Դո՛ւն ես ալեկոծ սիրտեր խաղաղող:

Դո՛ւ գարգն աղքատիկ մեր սեղաններուն,
Աստուածածնէն (2) մինչ Յիսնակ — Ետի Խաչ,
Ժպտուն, ծիծաղկոտ, կեանքով պատարուն,
Անո՛ւշ հաճոյքներ կը ցանես ձախ աջ.

Երանապարգեւ օրհնալից խաղող,
Դո՛ւն ես ալեծուփ սիրտեր խաղաղող:

Թո՛ղ Թէլլի Չավուշն երգեն ու գովեն,
Իր հատիկներով մեղրոտ, ոսկեշար,
Չանցնի՛մ պիտի բնաւ ես անոր քովէն՝
Ու կ'երգեմ յաւէտ իմ լոյս-ալիշար.

Երանապարգեւ օրհնալի՛ց խաղող,
Դո՛ւն ես յուսահատ սիրտեր խաղաղող:

ՄԿՐՏԻՉ Ա. ԹՈՒՐԵԱՆ



ԳԻՏՈՒԹԵԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ

Իրիկուն մը, փոքրիկ բարեկամներս, վառարանին դիմացն նստած էի, դուրսը հեղեղանման անձրեւ կը տեղար բռնաշունչ հովով մը, կ'ըսէի մտովի: Որքան քաղցր է բարեկիրթ քաղաքներու հանգստութիւնը վայելել, մինչ այնքան մարդիկ անդադար հազարումէկ վտանգներու ենթարկուած են և ուրիշ ստուար թիւ մ'ալ՝ վայրենի վիճակի մէջ, արուեստից անսպառ աղբիւրներն գլխովին կ'անգիտէ. Այս բաղդատութիւնը մաքիս մէջ բաղմաղան խորհրդածութիւն-

(2) Թէեւ Աստուածածնէն շատ առաջ կը հասնի խաղողը, սակայն զաւանները Աստուածածնին միայն կ'սկսին ուտել զայն, խաղող-օրհնէքի արարողութենէն ետքը: Դեռ շատ տեղեր պահած են խաղող օրհնէքէն առաջ խաղող չուտելու աւանդութիւնը՝ մանաւանդ մեր բարեպաշտիկ մայրերն ու քոյրերը:

ներու ծնունդ տուաւ և հեզիկ ընկղմած տեղէն՝ սկսայ մեքենարար զիս շրջապատող առարկաներն աչքէ անցնել։ Այս սենեակն ուր կը պատսպարուիմ, մտածեցի ամբողջ աշխարհն կը ներկայացնէ։ Հազարաւոր գործաւորներ աշխատած են զայն այս վիճակին վերածելու։ Առարկաներն զոր կը պարունակէ, շոգենաւներ ու շոգեկառքներ աշխարհիս ամէն կողմերէն բերած են։

Այս կրակարանն ուսկի՞ց կուգայ։ Պիւրէնեան լերանց մարմարիոնի քարահանքերէն՝ ուր գործաւորներ մեղմիկ խրամներ բանալով, հազարաւոր աշխատանքներէ ու խնամքներէ ետք՝ համբերութեամբ ժայռն կը կտրեն։ Ուրիշ անձինք զայնս կը տաշեն, կը ձեւաւորեն, ու կը քանդակեն։ Քարէ պատն որու վրայ կրակարանը յեցած է, ապառաժի կտոր էր որ երկաթեայ ցողունի մը հարուածներն քիչիկ քիչիկ խլած են։ Անդին անոր տակով ունելիք մը կը գտնուի։ Որքան պատմութիւններ կարողէ մեզ պատմել այս ջնջին գործին։ Անոր սկզբնաւորութիւնն ի՞նչ է։ Երկաթի հանածոյ մը որ մետաղի ոքսիտի վիճակ մ'ունէր։ Պէտք է որ հանքահանները գիտնան հանածոյն հանել և հանքածուխի հետ խառնելով բարձր հնոցներու մէջ, ուսկից ատրաշէկ ձուլածոյն հրեղէն գետերու նման կը ժայթքէ։ Քարածուխը մեծ դժուարութեամբ կը հանեն գետնափոր նրբանցքներու մէջէ։ Ասոր շնորհիւ է որ մաքուր երկաթ կ'ունենանք զոր մուրճով կը ծեծեն, կը խարտոցեն, կը բանին զոյգ մ'ունելիք շինելու համար։

Երկաթագործութիւնը հազարաւոր գործաւորներ կը բանեցնէ, որ հանածոյն կը ջերուցանեն, հալածոյքն կը թափեն, երկաթը կը դարբենեն և զայն կը ծեծեն՝ յաղթակոյտ կտորներով, մեր գործարաններու շոգեշարժ հզօր մուրճերու գործածութեամբ։

Աւելի հեռուն կան կրակարանին պղնձեայ յենարաններն. նմանապէս մետաղ մը զոր մարդ Քիլիէն՝ Մեքսիքայէն Անգղիա կը փոխադրէ և որ կրակարանի յենարաններ ըլլալէ առաջ, բաւական ճամբորդութիւններ կ'ընէ։

Գետինը օթոց մը կայ. մի միայն ասի կարող է ամբողջ համայնագիտակ բառերքի մը նիւթն մատակարարել։ Բրդեղէն

է ան, և ոտքի ներքեւ փռուելէ առաջ՝ ոչխարի մը կռնակին վրայ կը գտնուէր։ Յետոյ մանարանէն կ'անցնի, ուր անհամար մեքենաներ՝ գործաւորներու ամբողջ բանակ մը՝ զանի բրդեայ կարժերու կ'այլափոխեն։ Անի ներկուած է զանազան գոյներով որք մարդուս աչքն կը չլացնեն գոյներու արուեստական ներդաշնակութեամբ։ Մէն մի բուրդի կարժ որ գործիքէն կ'ելնէ պարտի ներկատաշտէն անցնիլ. յատակին կապոյտ գոյնը շինուած է լեղակով զոր Ձինացիք կը մշակեն և ներկարարներն կը պատրաստեն, իր թլիփն կարմիր է, հրուկն որ Ամերիկայի մէջ կ'աճի սոյն գոյնը կը մատակարարէ։ Իսկ մնացեալ գոյներն որ զայն կը կազմեն նմանապէս հեռաւոր երկիրներէ կը բերուին։ Կրակարանին մէջ կոճղեր կան որ կը վառին բոցածաւալ. փայտահատներն զայնս անտառներէն կը կտրեն, անոնցմով լաստ կը շինեն և գետը կը ձգեն, որ մինչեւ մեր մայրաքաղաքն կը բերէ։ Ասոնց վրայ գետնածուխի կտոր մը կայ, զոր հողին աղիքներէն կը հանեն և զոր ճարտարագիտութիւնը մեծաքանակ կ'սպառէ մեքենաներու կեանք տալու, շոգեկառքը երկաթուղիին վրայ վազցնելու եւ չարժման մէջ գնելու այն յաղթածեւ շոգենաւներն որք Ուիլկիններու մակերեւոյթը կ'սկսեն։ Գեղեցիկ ձենապակեայ երկու ամաններ կրակարանս կը զարդարեն նախ ձերմակ հող մ'էլն ասոնք, զոր քայօլին կը կոչեն. յետոյ բրուտի գործանոցին մէջ ձեւակերպուելով՝ ճարտար գործաւորներու ձեռքով փռուներու մէջ թրքածուած են։

Ասոնց ետին սնդկածեփ հայելի մը կը լուսավառի. ինչ սքանչելիքներ կը պարունակէ այս հայելին։ Մեր գետերու աւազը սաստիկ տաքնալով օշնանի ու կիրի բաղադրութեամբ ասյակի կը շինուի, զարմանալի խառնուրդ մը որ բոլոր մեր պիտոյքներուն կը գործածուի։ Ջայն սնդիկով ու անագով կը ծեփեն, մետաղներ՝ զորս հանքահաններն երկրային կեղևին ներքեւ փրկուողներն կ'երթան։

Որքան աշխատանք, որքան նեղութիւններ որքան հնարագիտութիւն կը ներկայեն ինձ ինչ որ բոլորտիքս կը տեսնեմ։ Այս թերթ մը թուղթն որու վրայ կարող

եմ գրեք, իմ գաղափարներս արտագրել, այս մետաղեայ գրիչն որ մեկանը կը հայթայթէ, ընդարձակ գործարաններէ կ'ենեն որ չափադէտներ, գործաւորներ՝ հզօր մեքենաներ շարժման մէջ կը դնեն: Նկարէ թուղթը որ պատերն կը ծածկէ ըստ ինքեան հնարագիտակ արտադրութեան մը սքանչելիքն է: Որքան նմանօրինակ ակնարկութիւններ կ'արելի է ընել այն հագուստներուն որք զիս կը պատեն հեշտին և որք շինուած են չուսայէ, կտաւէ, մետաքսէ, և դանազան կերպասներէ, կերպասներ՝ զորս հնարագէտներն կատարելագործած ու արտադրած են:

Իսկ եթէ մէկդի դնեմ ֆիլիքական բարեկեցիկ տեսակէտն, ինչ հիացում, ինչ զարմացում կը ծնին մաքիս մէջ այս նկարներն ուր արուեստագէտն կը նկարէ իմ սիրելիներուն, բնութեան սիրուն տեսարաններուն պատկերը: Ինչ խորհրդածութիւններ կ'արթնցնեն մէջս այս գիրքերը, զորս փիլիսոփաներ, բանաստեղծներ, և բաղմագէտներ յօրինած են: Թո՛ղ մէկը խորհրդածէ քաղաքակրթութեան այս օրհնեալ ձիրքերուն վրայ և անտարբեր աչօք չպիտի դիտէ անոնք: Ի շնորհս տպագրութեան միայն իմ գիրքերս հարցաքննելու պարտաւորեալ եմ, և ահա աստեղագիտութեան տեղեակ կը դառնամ գրէթէ կայիլէի և Նեւտոնի հաւաստի: Բնալուծութիւնը, եթէ կամիմ, կարող եմ Լափուսգէի. իսկ բնական գիտութիւնը՝ Պիւֆօնի չափ դիտեալ: Բոլոր այս հանճարներն որք իրենց զօրութիւնն, մտքի կորովն սպառած են ստեղծելու, ուսումնասիրելու և բնութեան գործերուն խորը թափանցելու, ահա անոնց երկերէն օգուտ կը քաղեմ և կը կրթուիմ անոնց դպրոցին մէջ: Անցելոյն մարդկանց հետ կը խօսիմ՝ ինչպէս հիմակ ապրողներու հետ. և բոլոր ասոնք առանց դուրս ելնելու այս չորս պատերով շրջափակ տուններէն՝ որուն մէջ կ'ապրիմ այնքան հեշտին ի շնորհս բոլոր երկիրներու, դասակարգերու, տարիքներու աշխատողաց, արուեստագիտաց և հնարագիտաց:

Թո՛ղ դատարկապարտն, որու համար աշխատանքն քիւս մ'է, որ ծուլութեան մէջ կ'աճի, իր միտքը չմշակեր, բան մը ուսանելու. բան մը արտադրելու հետ: Դուտ չէ՝

նայուած մը նետէ այն պատկերին վրայ զոր ուրուագրեցինք: Խղճի մը ձայնը պիտի լսէ նա որ պիտի ըսէ իրեն. Ինչ կերպով կը վայելես քաղաքակրթութեան բարիքներն. քաղաքակրթութեան՝ որ աշխատութեան դուստրն է: Եթէ քիչ մը չմտնակցեցար մտային և ֆիզիքական բարեկեցեցութեան այս անհուն շէնքին, զոր հաղարատը աշխատաւոր մարդիկ դարերէ ի վեր կը բարձրացնեն, արժանի՞ ես իւրօք անդ սպաստանարան գտնելու:

ՈՒՉԷՆԱ

Ժամանակաւ մարդ մը երեք աղջիկ ունէր. շատ աղքատ էր եւ լեռնէն խոտեր հաւաքելով դեղագործին կը ծախէր եւ ասանկով կ'ապրէին: Օր մը նորէն լեռ գացած ատեն պզտիկ աղջիկը Ռօզէլան՝ հետն առաւ: Ճամբան երբ դեղեցիկ պարտէզէ մը կ'անցնէին, Ռօզէլա բոլի մը տեսաւ ուրիշ խոտերու հետ խառնուած եւ բրդուց: Յանկարծ մարդ մը երեւցաւ խեղճ աղջկան:



— Ինչո՞ւ համար տիրոջս պարտէզին դուռը բացիր, ըսաւ բարկացող ձայնով մը, պէտք է որ ներս դաս անոր դիմացը, որպէս զի քու վճիռդ տայ:

Ի հայրն ու աղջիկը առաջնորդեց գետ-

նին տակը ուր կապոյտ թռչուն մը կաթի մէջ կը լուացուէր. թռչունը ոսկի ամանէն դուրս ելաւ և սիրուն երիտասարդի մը կերպարանքը առաւ:

— Օրիորդը ի՞նչ կ'ուզէ, հարցուց պահպանին:

— Տէր իմ, բողկը բրցուց և ձեր բնակարանին դուռը բացաւ:

— Ի՞նչպէս աղջիկս կրնար գիտնալ որ, ըսաւ հայր, Ձեր Մեծութեան բնակարանին դուռն է այն:

— Ուրեմն ըսաւ Տէրը, թող աղջիկդ հոս մնայ և իմ կինս ըլլայ: Երբ որ ուզես, կըրնաս գալ զինքը տեսնել:

Հայրը լալով հրաժեշտ առաւ աղջիկէն եւ մեկնեցաւ:

Երբ երիտասարդը և աղջիկը մինակ մընացին, տղան ըսաւ անոր:

— Դուք հոս տիրուհի էք և անոր տուաւ բոլոր բանալիները:

Օր մը կապոյտ թռչունը մեկնած էր (որովհետեւ Ռօզէլայի ամուսինը դուրս ելած ժամանակ միշտ այդ ձեւը կ'առնէր), Ռօզէլայի քոյրերը եկան զինքը տեսնել և հարցուցին թէ ո՞վ է իրենց քեռայրը. Ռօզէլա պատասխանեց թէ չէր գիտեր: Արդարեւ կապոյտ թռչունը խնդրած էր աղջիկէն որ բնաւ իր ո՞վ ըլլալը չհարցնէ: Բայց քոյրերը որոնք շատ հետաքրքիր էին, այնչափ ստիպեցին զինքը որ երբ թռչունը իրիկունան եկաւ, տեսաւ որ կինը մտածկոտ կերպարանք մը ունի:

— Ի՞նչ ունիս, հարցուց անոր:

— Ոչինչ, պատասխանեց Ռօզէլա. բայց ձայնէն յայտնի էր որ բան մը կար, ուստի ամուսինը պնդեց, և վերջապէս Ռօզէլա ըսաւ որ կը փափաքի ամուսինին ո՞վ ըլլալը հասկնալ:

— Եթէ ըսեմ, քեզի շատ գէշութիւն պիտի պատահի, ըսաւ ամուսինը, բայց քանի որ կ'ուզես, գոհ պիտի ընեմ քեզ:

Յետոյ խնդրեց Ռօզէլայէն որ ոսկիէ գաւաթը սեղանին վրայ դնէ և սկսաւ ոտքերը մէջը թրջել:

— Ռօզէլա՛, հարցուց, կ'ուզե՞ս անպատճառ անունս գիտնալ:

— Այո՛:

Այն ատեն աւագանին մէջի ջուրը բարձրացաւ ելաւ մինչեւ թռչունին կուրծքը:

Երկու անգամ եւս միեւնոյն հարցումը ըրաւ և նոյն պատասխանը առաւ. ջուրը մինչեւ բերանը հասաւ:

— Ռօզէլա, ըսաւ վերջին անգամ ըլլալով, կ'ուզե՞ս անպատճառ անունս գիտնալ:

— Այո՛, այո՛, այո՛:

— Հաւ ուրեմն, անունս Երօս է:

Հազիւ խօսքը լմնցուց և ահա թռաւ գնաց: Միեւնոյն ժամանակ ոսկիէ աւագանը և ապարանքը անյայտ եղան: Ռօզէլա մինակ մնաց ընդարձակ դաշտի մը մէջ. սպասուհիները կանչեց, բայց պատասխան տուող չեղաւ: Խեղճ աղջիկը սկսաւ լալ:

— Երօս, Երօս, հառաչեց, ո՞վ պիտի պաշտպանէ ինծի եթէ դու զիս երեսէ ձգես:

Յանկարծ նոր տուն մը տեսաւ որ մինչև այն ատեն չէր դիտած. պատուհանէն աղջիկ մը երեւցաւ, Երօսի քոյրն էր:

— Ռօզէլա, ըսաւ ան, հիմայ մայրս դուրս ելած է, եթէ կ'ուզես քովս եկուր:

Եւ մաղերը քակելով վար ձգեց: Ռօզէլա բռնեց այդ մաղերէն և սանդուղի տեղ գործածելով վեր ելաւ: Իր տակը ուտելիք հրամցուց իրեն և յայտնեց որ իր մայրը, (որ Երօսին ալ մայրն էր) չար կին մըն էր:

Այդ միջոցին չար կինը վրայ հասաւ եւ հասկնալով Ռօզէլայի ո՞վ ըլլալը ուզեց ուտել խեղճը, բայց իր աղջիկը չթողուց:

— Եթէ ատանկ է, ըսաւ կինը, նամակ մը պիտի տամ իրեն, թող տանի բարեկամներէս մէկուն յանձնէ:

Այս բարեկամը պառաւ մըն էր առաջինէն աւելի չար. խեղճ Ռօզէլայի սիրտը լեցուեցաւ ասիկա իմանալով, բայց ճարձիկար, ուստի ընդունեց, մաղէ սանդուղէն վար իջաւ և ինքզինքը գտաւ ընդարձակ դաշտի մը մէջ:

— Երօս, Երօս, պօռաց նորէն, ո՞վ պիտի պաշտպանէ ինծի, եթէ դու երեսի վրայ թողուս զիս:

Այս անգամ ամուսինը երեւցաւ:

— Կը տեսնե՞ս հիմակ թէ ո՞ւր տեղերը տարաւ քեզ քու հետաքրքրութիւնդ:

Ռօզէլա սկսաւ արտասուել եւ ներում խնդրեց անանկ մը որ Երօս չդիմացաւ:

— Մտիկ ըրէ, ընելիքդ բռնմ: Մօրս յանձնարարութիւնը կատարելու ես: Ծառաբույժ վրայ գետ մը պիտի տեսնես որու գարշահոտ ջուրը զզուանք կը պատճառէ. ա-

փիղ մէջը պիտի առնես այդ ջուրէն, պիտի խմես և քրտես. « Այս ինչ աղւոր ջուր է »: Յետոյ պարտէզի մը մէջէ պիտի անցնիս, ծառերուն պտուղներէն քանի մը հատ բրցուր կեր, « Ի՛նչ աղւոր տանձ է » ըսէ: Փուռի մը առջեւէ պիտի անցնիս, որու հանած հացը թէեւ աժան կը ծախուի բայց առնող չըլլար. « Ի՛նչ եփուն հաց է » կ'ըսես և գնելով կտոր մը կ'ուտես: Ետքը դրան մը առջեւ կը հասնիս որ սարդի ոստայնով ծածկուած է. աւել մը առ և լաւ մը մաքրէ:



Բիչ մը անդին ուրիշ դուռ մը կայ զոր երկու անոթի շուներ կը պահպանեն. հացէդ մէջմէկ կտոր տուր անոնց, Հոսիէ ալ անցնելով կը հասնիս սանդուղի մը առջեւ որու տակը նստած են երկու հսկաներ. ասոնց կերակուրի պնակները աղտոտ են, կը սրբես և կերակուրը մէջը կը դնես, Տունին մէջ կայ ածելի մը, զմելի մը, մկրատ մը. կըրցածիդ չափ փայլեցուր ասոնք: Երբ լմնաս ճամբադ շարունակէ և մօրս նամակը իր բարեկամ կնիկան յանձնէ, անոր կարգացած ժամանակ՝ սեղանին վրայ տուփ մը կայ, առ անիկա և փափիր: Ըսածներուս ազէկ ուշադրութիւն րբէ, եթէ ոչ դուրս չես ելեր այդ տունէն,

Ռօզէլա այս խրատները կէտ առ կէտ կատարեց. գետէն անցաւ, տանձերը կերաւ, հացին համը նայեցաւ, երկու շուներուն հաց տուաւ, դռան սարդի ոստայնները աւելց, երկու հսկաներուն պնակները մաքրեց, ածելին՝ մկրատն ու զմելին փայլունցուց, նամակը պառաւին տուաւ և տու-

փը առնելով փախաւ. Երբ կինը կարդալը լմնցուց, աղջիկը կանչեց:

— Ռօզէլա՛, Ռօզէլա՛:

Պատասխան չառաւ. չորս դին նայելով տեսաւ որ տուփը անյայտացեր է:

— Ածելի, զմելին, մկրատ, կտրտեցէք ջրդիկը, պօռաց:

Բայց անոնք պատասխանեցին.

— Ածելի, զմելի, մկրատ ըլլանուս ի վեր վրանիս անգամ չնայեցար, մինչդեռ Ռօզէլա կըցածին չափ փայլունցուց մեզի:

Պառաւ բարկացաւ ու գոչեց.

— Հսկաներ, ետեւէն դացէք և սպաննեցէք անամօթ աղջիկը:

— Ե՞րբ դու մեր կերակուրին նայեցար, պատասխանեցին հսկաները, մինչդեռ Ռօ-



զէլա պնակներնիս մաքրեց, փոշիները սըրբեց որպէսզի հանգիստ ուտենք:

Այն ժամանակ կինը կատղած հրամայեց դուռին որ դոցուի, շուներուն՝ որ զայն պատառեն, փուռին՝ որ այրէ զայն, պարտէտէզին ծառերուն՝ որ զայն ջախջախեն, գետին՝ որ զայն խեղդէ. բայց ամէնքը յիշելով Ռօզէլայի բարութիւնը կը մերժէին անոր չարիք հասցնել:

Ռօզէլա շարունակեց ճամբան. մոռնալով որ հետաքրքրութիւնը եղած էր իր առաջին դժբաղդութեան պատճառը, ուզեց դիտնալ

թէ ինչ կայ տուփին մէջ և բացաւ : Շատ մը պզտիկ պուպիկներ դուրս ցատքեցին ոմանք պարելով , ուրիշներ երգելով : Ռօզէլա բաւական ժամանակ զուարճացաւ . բայց երբ ուզեց նորէն զանոնք տուփին մէջ դնել , փոքրիկ մարդերը ընդդիմացան : Գիշերը կը մօտենար , ինչ ընէր :

— Երօս , երօս , գոչեց , ո՞վ պիտի պաշտպանէ ինծի եթէ դու երեսի վրայ թողուս զիս :


Ամուսինը նորէն երեւցաւ ու ըսաւ .

— Ահա հետաքրքրութեանդ մէկ նոր պատիժը կը կրես . եւ քանի մը խօսքով պուպիկները տուփը մտցուց :

Ռօզէլա տուփը առաւ և շիտակ փնտռումներ գնաց : Զատուկը երբ տուփը տեսաւ այնչափ ուրախացաւ որ սրտին իջուածք գալով մեռաւ : Երօս նորէն իր կիներ առաւ եւ այլ եւս Ռօզէլա հետաքրքիր չեղաւ իրեն չվերաբերող բաները հասկնալու : Ասկէ առաջ քաշած տառապանքները լաւ դառ մը եղած էին իր գէշ սովորութիւնները ուղղելու համար :

Թարգմ.

ՋԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ԱՆՁՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Սիրելի՛ որդեակ .

Դիտէ՛ս ի՞նչ է անձնասիրութիւնը :

Մարդ մը կ'ըսէր ինքնիրեն , բաւական է որ ես երջանիկ ըլլամ , ինչո՞ւս պէտք են ուրիշները : Ամէն մարդ ինքզինքը պէտք է որ հոգայ այս աշխարհիս մէջ , ես ո՛չ ուրիշներուն համար աշխատելու եկայ , ո՛չ անոնց վիճակին վրայ սիրտ հատցնելու եւ ո՛չ ալ անոնց համար բանէ մը ինքզինքս զրկելու . մի միայն ինքզինքս պէտք է որ հոգամ , ինքզինքս պիտի մտածեմ ու ինծի համար ապրիմ , ուրիշները ինչ կ'ուզեն թող ըլլան . ուստի՛ ես , միշտ ես , ու ինձմէ անդին ոչինչ :

Ահէ՛ , ահա՛ անձնասէր մարդուն նկարագիրն , ահա՛ անձնասէրին մտածումները :

Թէ որ անձնասէրին ծանօթներէն մին վիշտ մը ունենայ , անիկա չուտ մը կը հեռանայ , որ իրեն հանգստութիւնը չվրդո-

վի . եթէ ուրիշները դժբաղդութեան , ծախորդութեան եւ կամ աղքատութեան մէջ իյնան , անձնասէրը իր տան մէջ կը փակուի , վախնալով որ իր ունեցածէն քիչ մը բան եթէ տայ , ինքն ալ կ'աղքատանայ , ու իր զուարճութենէն բան մը կը պակսի :

Արդ , գիտէ՞ք թէ՛ անձնասէրին ի՞նչ վիճակ վերապահուած է , եթէ իրեն ալ դժբաղդութիւն մը պատահի , որովհետեւ ինքը մարդ չսիրէր , մէկն ալ զինք չսիրէր . ինքը ուրիշներէն հեռի կը փախչի , ուրիշներն ալ իրմէ կը հեռանան , ու երեսն անգամ նա յող մը չգտնուիր : Անձնասէրն ո՛չ հայր ունի , ո՛չ մայր , ո՛չ եղբայր , ո՛չ քոյր եւ ո՛չ բարեկամ :

Մարդիկ չար ու ապերախտ են , կ'ըսէ անձնասէրն՝ ու չտեսներ որ ինքն է ապերախտն ու չարը :

Ո՞վ քարասիրտ անձնասէր , դու առանձին ու քաշուած կ'ապրիս , ինչպէս բոլ մը՝ իր աւերակ բոյնին մէջ , ուսկից միայն գիշերները դուրս կելլէ՛ որս գտնելու համար : Դուն՝ միայնակ , քարի մը վրայ ծլած բոյսի մը նման կը ծլիս , բայց երբ արեւը ծագի ու իր հրատոցոր ճառագայթները տարածէ , անմիջապէս կը չորնաս :

Կուգայ ծերութիւնը , կուգայ հիւանդութիւնը , ու այն ատեն չունիս մէկը քովդ որ մխիթարէ քեզի . մինակ կը հալիս ու կը մաշիս , մինակ ցաւ կը քշես ու վերջապէս մինակ կը մեռնիս :



ՓՈՅՐԻԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՍԿԻՋՐԷՆ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐ

Հ Ի Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ն

Դ Լ Ո Ւ Թ Գ

Հ Ն Դ Կ Ա Ս Տ Ա Ն

(Շար . 4րդ թիւէն)

Քաղաքական եւ կրօնական կազմակերպութիւն . — Մանուկ օրէնքը երկու կանոնի մէջ կ'ամփոփուի , — Մարդկային ընկերական կազմութեան համար՝ Քաղաքացիական

սակարգութիւնը. Անհատին համար՝ բնական ու բարոյական անարատութիւնը: Մանուկ մատենան՝ Վետական աստուածներուն կրօնական կարգը կը պահէ, բայց զանոնք կ'ստորադասէ Պրահմին, որ բացարձակ ու յաւիտենական էակն է, ուրկէ կը բղխի Պրահմա, տիգերքին ներգործական սկիզբը, որ ինքն ալ իր կարգին արարչօրէն առաջ կը բերէ Բարամադւան՝ աշխարհքին հոգին, Բացարձակ էակէն (Պրահմին) գեր ի վեր



Դրեմուրդի

կը դասաւորէ Հնդկական Դրեմուրդին (Երրորդութիւնը), զոր կը կազմեն Պրահմա, որ կ'ստեղծէ աշխարհները. Վիշնու՝ որ Պրահմայի ստեղծած աշխարհներուն ամէն ինչը կը կարգադրէ. Սիվա՝ որ կը կործանէ, կ'ապականէ այդ աշխարհները, զանոնք վերստին նորոգելու, ստեղծելու համար. ասոնցմէ վերջը կը դասակարգէ Տէվաները (1)

(1) Հէֆեսթներու, մասալներու մէջ յիշուած ամենակարող ու ամենագէտ դեւերն են, եւ միանգամայն քրիստոնէական լեզուով դեւ (սատանա) են: Եւ արդէն եւրոպական diable = սատանայ նշանակող բառն ալ՝ իր ստուգաբանական նշանակութեամբ « անկեալ աստուած » ըսել է:

կամ աստուածները, իբրեւ բնութեան ուժերու այլաբանական կամ խորհրդաւոր պատկերացումի: Այս նուիրապետական կարգաւորումէն վար աստիճանին վրայ կը դասաւորէ մարդը. ու ասիկէ ալ աւելի վար կը դասակարգէ միւս ստորին արարածները, իրական կամ երեւակայական:

Մանուկ կրօնամատենին աստուածարանական կամ հնդկական հաւատքին համեմատ, մարդ կրնայ իր կրօնանուէր գործերով ու բարեպաշտական առաքինութիւններով հաւասարիլ աստուածներու, ու երբ մեռնի, կ'երթայ անէանալու Պրահմայի ծոցին մէջ:

Անոնք որ չեն գիտցած ու կրցած ապահովել աստուծոյ մէջ ընկղմելու իրենց այս երանաշնորհ վախճանը՝ կը պատժուին կամ կը վարձատրուին իրենց արժանիքին համեմատ:

Բայց ինչպէս բարի՝ նոյնպէս եւ չար գործերու արդիւնքը կը հատնի սպառելով ժամանակին հետ: Երկինքն ու դժոխքը նորէն իրենցմէ դուրս կը նետեն իրենց ընդունած հոգիները, որոնք նորէն աշխարհ դալով մարմին կ'առնեն, օրէնքով նախասահմանուած որոշ պայմաններու մէջ, իրենց արժանաւորութեան կամ անարժանութեան համեմատ վերին կամ ստորին աստիճանի վերաբերող էակներու կեանքովը: Հնդկացի կամ Մանուի կրօնական վարդապետութիւնը կ'ենթարկէր գործարանաւորեալ բնութիւնը՝ մարդէն սխեալ մինչեւ տունկը, եւ երկինքէն ու դժոխքէն վերստին աշխարհ՝ նետուած հոգիները՝ իրենց սկզբնական մեղքերը քաւելու եւ արդարանալով նորէն երկինք վերադառնալով՝ վերջնականապէս Աստուծոյ մէջ ընկղմելու, հոն անէանալու: Աշխարհի վրայ գտնուող ինչ տեսակ էակներու կամ կենդանիի մարմին առնելով բնակելու եւ մարմինէ մարմին գաղթական հաստատուելու կամ ճամբորդելու է, եւ ո՛րքան դարեր կատարելու է այդ հոգեփոխական կամ մարմնափոխական գաղթադնացութիւնը:

Որոշեալ ժամանակի մը մէջ կատարուած վերջին դատաստանը, ամէն բան կ'անհաջնէր Պրահմայի մէջ, բայց նորէն շուտով մը անորմէն բղխած տիեզերական նոր ըստեղծագործում մը վերստին կ'սկսէր իր նոր շրջանը. արդար հոգին մի միայն կ'ազատագրուէր այս տառապալիք կեանքի նոր

վերականգնողումէն, եւ ընդունուած կը լինէր յաւիտենական էութեան մէջ բովանդակուելու երանութիւնը: Չարը կամ չարիքը եւ թշուառութիւնը բացատրուած, չափուած էին գործուած մեղքին համեմատ. բարիքը, բաղդաւորութիւնն եւ զօրութիւնը մարդուն ունեցած կամ գործած առաքինութեան համեմատ էին: Այս տեսակ դաւանութեամբ էր որ օրինաւոր կը համարէին



Պուտտա

բնութեան մէջ էականերու նուիրական դասակարգութիւնը, եւ ընկերութեան մէջ՝ Քասդերն որոշող անփոփոխելի դրութիւնը:

Պուսսայականութիւնը, — Պրահմաններու աստուածապետական այս ամենակարող զօրութիւնը կամ տիրապետական դրութիւնը խախտեցաւ, երբ մեր թուականէն 600 տարի առաջ Պուսսա կամ Իմաստունը մականւանեալ Սափա Մուճի, սկսաւ աւետարանել իր կրօնական կամ հաւատոյ մարգարէական կանխաձայնեալ վարդապետութիւնը: Ատոր հայրը նէփիւլի մերձակայ երկրի մը

Րաճան կամ իշխանն էր: Այս արքայազունը զաւակը 26 տարեկան հասակին մէջ, ամէն բան թողուց եւ գնաց քաջուիլ անապատը, հոն փնտռելու համար ճշմարտութիւնը. այդ անապատական կեանքը թողուց 30 տարեկանին մէջ, եւ սկսաւ իր կանխաձայն կամ վերանորոգիչ վարդապետութիւնները քարոզել, որոնք առաւելնելով լեցուն՝ կը յուզէին ունկնդիրներուն հոգիները: Սաքիա Մուճին կը քանդէր Պրահմականութիւնը, Քասդերու իշխանական դրութեան տեղ հաստատելով ամէն դասակարգի ու սեռի հաւասարութիւնը: Նոյնպէս պրահմական ծիսակատարութեամբ պահանջուած կեղծուպատիր առաքինութեանց տեղ՝ ճշմարիտ բարիքը գործելու աւետարանական վարդապետութիւնը: Պրահմական քուրմերու փարիսեցիական կազմակերպութիւնը քայքայելով՝ կրօնական պաշտօնի կը կոչէր աղքատներն ու մուրացկանները: Պուտտան մարդուն համար կը վարդապետէր վեց կատարելութիւն, Գիտութիւնը, Մաքրութիւնը կամ Աւարդութիւնը, Կորովութիւնը, Համբերութիւնը, Ողորմութիւնը, « Իմ վարդապետութիւնս, կ'ըսէր ան, գթութեան, կարեկցութեան, ողորմածութեան վարդապետութիւնն է: Փրկութեան ճանապարհը բաց է ամէն անոնց առջեւ, որոնք կը ջնջեն իրենց կիրքերը, ճիշդ ինչպէս փիղ մը կ'ըրծանելով կ'ոչնչացնէ եղէգէ շինուած խրճիթ մը: »

(Շարունակելի)



ԳՐԱՅԱԿԱՆ ՎԷՊ

ԺԻՒԼ ՎԵՐՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

ՂԵՊԻ ԵՐԿՐԻՍ ԿԵԴՐՈՆԸ

(Շարունակութիւն 4րդ թիւէն)

Երբ հօրեղբայրս կարդաց, Լէյտեան շիւրջի մը դպածի պէս տեղէն վեր ցատքեց. վեհ ու զուարթ կերպարանք մը առեր էր: Սկսաւ սենեակին մէջ վեր վար պտտկիլ,

աթոռները կը շարժուէր, գիրքերը աստին անդին կը նետէր, բռնցքի հարուած մը հոս կուտար, կից մը՝ անդին: Վերջապէս ջիւղերը հանդարտեցան, եկաւ թիկնաթոռին մէջ ինկաւ՝ ուժը կտրած:

— Ժամը քանի՞ն է, հարցուց:

— Երեքը կ'անցնի կոր:

— Որչա՛ր ուշ է, տնօթութիւնէ կը մեռնիր: Սեղան երթանք, յետոյ...

— Յետոյ:

— Սնտուկս կապէ:

— Խնջ, գոչեցի:

— Բուկի ալ մէկտեղ, աւելցուց անգուլթ դասախօսը:

2.

Այս խօսքերուն վրայ սարսափեցայ, բայց ինքզինքս բռնեցի: Մինակ դիտական պատճառաբանութիւններով է որ հօրեղբայրս կրնայի արգիլել, և տտանկ առարկութիւններ չէին պակսեր: Երկրիս կեդրոնը երթա՛լ. ինչ յիմարութիւն: Տրամաբանութիւններս ետքի պահեցի և սկսայ ճաշին վրայ խորհիլ: Մարթա շուտ մը ամէն բան պատրաստեց, անանկ որ մէկ ժամ ետքը փորս կուշտ՝ խնքս գլուխս եկաւ քիչ մը:

Երբ միբոց կերանք, հօրեղբայրս նշան ըրաւ որ իրեն հետ սենեակը երթամ: Գրասենդանին մէկ ծայրը ինքնստաւ, միւսն ալ ես:

— Աքսէլ, ըսաւ անուշ ձայնով մը, խելացի տղայ մըն ես: Պարտաւած՝ կուռէ քաշուելու վրայ էի երբ մեծ ծառայութիւն մը ըրիր ինծի: Ով գիտէ վերջը ինչ պիտի ըլլար: Զպիտի մոռնամ ըրածդ և մեզի վերապահուած փառքէն դու ալ քու բաժինդ պիտի ունենաս:

— Վարպետը կակուղցեր է, ըսի մտքէս, ժամանակն է այդ փառքին վրայ վիճելու:

— Ամէնէ առաջ, ըսաւ հօրեղբայրս, բացարձակ լռութիւն կը պատուիրեմ: Գիտուններուն մէջ քիչ նախանձող չունիմ. անոնց ամէնն ալ պիտի ուզեն այս ճամբորդութիւնը կատարել, մինչդեռ մեր դարձէն ետքը մինակ տեղեկանալու են ատոր:

— Կը կարծէ՞ք որ ատանկ չատ մը յանգուզն մարդեր գտնուին:

— Հապա՛, ո՞վ կը վարանի ասանկ պատիւի մը ետեւէ չվազելու: Եթէ ծածկագիրը

հրապարակուի, աշխարհիս բոլոր գիտունները Սաքնիւսէմի ցցուցած ճամբուն վրայ պիտի խոնուին:

— Ես ատոր վստահ չեմ, հօրեղբայրս, որովհետեւ յիշատակագիրն ինքնութիւնը ապացուցանող բան մը չկայ:

— Ինչէ՞ն: Հապա այս գիրքը ուր պահուած էր:

— Կ'ընդունիմ որ այդ գիրքերը Սաքնիւսէմի ձեռքէն ելած են, բայց ատկէ չհետեւիր որ ինք ճամբորդութիւնը կատարած ըլլայ. կարելի է ծածկագիրը սուտ է:

Անմիջապէս զղջացի այս վերջին խօսքը ըսելու: Դասախօսը ունքերը պոստեց. վախցայ որ խօսակցութեան վախճանը պիտի գէշնայ. բայց այդ օրը բողոքս բաց էր: Խստաբարոյ վարպետիս չրթունքներուն վերայ խնդուքի ծալք մը երեւցաւ:

— Կը նայինք հիմայ, պատասխանեց:

— Նախ, ըսի քիչ մը նեղացած, ներեցէք որ յիշատակագիրն վերաբերեալ առարկութիւններս աւարտեմ:

— Խօսէ՛ տղաս, մի նեղուիր, կարծիքդ յայտնելու ազատ ես: Ա՛լ եղբօրորդիս չես դուն, հապա՛ աշխատակիցս:

— Նախ՝ կ'ուզէի հասկնալ թէ ի՞նչ կը նշանակեն եօքուլ, Սնէֆէլս և Սքարթարիս:

— Ատկէ դիւրին բան չկայ: Դեռ նոր, Լայբցիկի բարեկամներէս մին աշխարհացոյց մը զրկեց: Գնա՛ մեծ գրադարանին երկրորդ յարկի չորրորդ քարտէսը տու:

Շուտ մը ուղածը բերի:

— Ասիկա, ըսաւ, Իսլանտայի ամէնէն աղուոր քարտէսն է:

Երկուքս ալ սկսանք ուշադրութեամբ քննել:

— Այս կղզին գրեթէ ամբողջովին հրաբուխներէ կազմուած է որոց ամէնուն ալ եօքուլ կ'ըսեն: Այս բառը իսլանտերէն «Սառնարան» կը նշանակէ: Լայնութեան այս աստիճանին տակ բոլոր հրաբուխները ժայռերու մէջէն դուրս կը ժայթքեն. ասկէ է որ կղզին բոլոր հրակէզ գազաթներուն ալ նոյն անունը կուտան:

— Շատ աղէկ ըսի, բայց ի՞նչ է Սնէֆէլսը:

Կարծեցի թէ չպիտի կրնայ պատասխանել. կը սխալէի:

— Նայէ՛ Իսլանտայի արեւմտեան եզերք

Ռէյքեավիքը կը տեսնեն, կզգիին մայրա-
ղաքն է: Քիչ մը ատիկէ վեր ելլի, մինչեւ
լայնութեան 65 րդ աստիճանը: Ի՞նչ կը
տեսնես:

- Ծնկոսկրի ձեւ ունեցող թերակզղի մը:
- Բաղդատութիւնդ ճիշդ է: այս ոսկո-
րին ծայրը բան մը չկայ:
- Ծովին մէջ բուսածի պէս լեռ մը:
- Լա՛ւ, այդ է Սնէֆէլսը:

տիւ, ինչո՞ւ համար:

- Որովհետեւ խառնարանը լավայով,
հրաշէկ ժայռերով գոցուած է և թէ...
- Հապա եթէ մարած հրաբուխ մըն է:
- Մարա՛ծ:
- Այո՛, վառ հրաբուխները՝ երեք հար-
իւրի չափ են: Բայց մարածները՝ անոնցմէ
չատ աւելի են: Սնէֆէլսն ալ մարած է: Ա-
մէնէն հին ժամանակներէ ի վեր անգամ մը



Պ. Լիտէպրօք Իսլանտայի քարտէսը կը քննէ Աքսէլի հետ

- Սնէֆէլսը:
- Այո՛, հինգ հազար ոտք բարձր լեռ
մը, որ աշխարհիս մէջ հռչակաւոր պիտի
ըլլայ եթէ խառնարանը մինչեւ երկրիս
կեդրոնը կը հասնի:
- Անկարելի է ատիկա, գոչեցի սրտե-
ղիով ատանկ ենթադրութեան մը դէմ:
- Անկարելի՞, հարցուց դասախօսը խըս-

միայն, 1219ին բորբոքած է. անկէ ետքը
կամաց կամաց հանդարտած է, անանկ որ
այսօր մեռեալ հրաբուխ մը կը համարուի:

Այս պատասխաններուն ըսելիք չունէի,
ուրիշ առարկութիւններ փնտռելու ետեւէ
եղայ:

— Ի՞նչ ըսել է Սնէֆէլս, հարցուցի, և
յուլիսի սկիզբները ինչո՞ւ համար յիշուած են

Հօրեղբայրս պահ մը խորհեցաւ, վայր-
կեան մը յուսացի որ չպիտի կրնայ պատաս-
խանել, բայց յոյսս պարապը ելաւ:

— Քու մթութիւն համարածդ ինծի հա-
մար լոյս է: Ասկէ կը հասկցուի թէ վար-
պետորդին Սաքնիւսէ՞մ ի՞նչ խնամով ճշդած
է իր գիւտը: Սնէֆէլսը քանի մը խառնա-
բաններէ կը բաղկանայ, պէտք էր ուրեմն
որոշել թէ ատոնցմէ ո՞րն է երկրիս կեդրոնը
տանողը: Ասոր համար տես ի՞նչ է ըրեր
խառնատացի գիտունը: գիտեր է որ յուրիս
սկիւնները Սքարթարիսի շուքը ձիւղ այդ
բացուածքին վրայ կ'իյնայ և նշանակեր է
իր ծածկագրին մէջ: Ասկէ աւելի բացայայտ
ըլլալ կարելի չէ: Երբ Սնէֆէլսի դագաթը
հասնինք, ա՛լ բռնելիք ճամբանուս վրայ
վարանելիք բան մը չունինք:

Տեսայ որ Հօրեղբայրս յիշատակագրին
վերաբերեալ ամէն բանի պատասխան ունէր
ուստի որոշեցի ա՛լ ատոր վրայ չի խօսիլ:
Անցայ գիտական առարկութիւններուն սրունք
բառ իս աւելի ծանրակշիռ էին:

Թարգմ.

ՋԱՐԵՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

(Շար)

Ձ. Յ. էֆ. ի թերթը, նոյնպէս ձեր խընդ-
րածներն. առաջին թիւէն զրկուեցաւ: —
Չատ նամակ կ'ընդունիք: — 1902 տարւոյ
Ժողովրդական Տարեցոյց հրատարակուած
չէ:

Երգում. — Ա. Ա. — Խորին շնորհակա-
լութիւն ձեր անհիւ բարեյօծարութեան
համար:

Սխառիւ. — Պ. Ն. Տ. — Ստացանք նա-
մակնիդ: Հանդէսիս 1-5 թիւերը զրկուե-
ցան:

Կիւն. — Յ. Հ. — 1-5 թիւերը զրկուեցան:
Պուրսուր. — Ս. Յ. Բ. կը կարգադրուի
Մ. էֆ. ի հետ:

Մաղնիսա. — Գ. Մ. 1-5 թիւերը զըր-
կուեցան:

Պէյրու. — Խ. Բ. Խորին շնորհակալու-
թիւն: Պատասխանը կ'ընդունիք:

ՎՐԻՊԱԿ

Հանրագիտակի նախորդ թիւով հրատա-
րակուած Մաղնիսին Յրդ. տողին մէջ ա-
նուց բառը, պէտք է անանց կարդալ:



ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Կ. Պոլիս. — Յ. Ա. Վ. — Ղրկած բա-
րոյալէպնիդ Բուրաստան Մանկացի մէջ հը-
տարակուած է: — Լաւ կ'ըլլայ, եթէ մի քա-
նին, աւելի մանուկներու յատկացեալներն
թարգմանելով զրկէք որ ընտրանօք հրա-
տարակուին:

Տիարպէիւ. — Լ. Ս. — Ստացանք նա-
մակնիդ. խորին շնորհակալութիւն ձեր գի-
տողութեանց և աջակցութեան համար: —
Այցաքարդերը զրկուեցան: Չատ նամակ
կ'ընդունիք: — Նոյնպէս ստացանք մանկա-
կական ոտանաւորը:

Սրվազ. — Մ. Ի. — Վերջին նամակնիդ
ես ստացանք: — Թերթերը առաջին թիւէն
սկսեալ զրկեցինք — Նմոյշը ներբակեալ կը
գտնէք — Չատ նամակ կ'ընդունիք:

Հիւսէյնիկ. — Կ. Մ. Յ. — Խորին շնոր-
հակալութիւն ձեր աջակցութեան համար,

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼԻՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասանա, Յակոբ էֆ. Պողոսեան
Չիլի ունիս Կարապետ էֆ. Մալէճանեան
Երգում, Տիգրան էֆ. Բրուտեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշճեան
Մարգուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Նիկովիլիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
Սիմ հանի Բեօյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան
Վեպիւր Բեօբիւ » » » »
Տիարպէիւ, Լեոն էֆ. Սրապեան

Վերոյիշեալ քաղաքներու մէջ Հանրագի-
տակի բաժանորդ գրուիլ փափաքողները,
կրնան Մեր Մեծ. գործակալներուն գիմել,
խիւ այն տեղերը, ուր զեռ գործակալ չու-
նինք, պէտք է ուղղակի Հրատարակչին
հասցէին գիմեն:

9. ՀԱՐՅՈՒՄ. — Շոգենաւներու պտուտակածնւ
անիւներուն հնարիչը ո՞վ է:

10. ՀԱՐՅՈՒՄ. — Ապակիի մը վրայ գծուած եր-
կու պատկերներ կային, որ տպարանին աշակերտը
անգամ մը վրան ծանր բան մը ձգեց եւ կտոր կտոր



ըրաւ. ամենայն խնամով բոլոր կտորները հաւաքելով
մեր ընթերցողներուն կը ներկայացնենք, յուսարով
որ գոնէ քանի մը գծազրիչներ կրան մեր առջի
պատկերը մեզի վերադարձնել:

11. ՄՐՅՈՒՄ. Բոլոր դպրոցականները կրնան
մասնակցիլ սոյն մրցույթին, եթէ ուշադրութիւնը
նեն հետագայ պայմաններուն:

Պատասխանները կ'ընդունուին Հայ. Ֆրանս.
եւ Անգլ. լեզուներով. — Առ առաւելն մէկ ու կէս
նամակի թուղթի երեսէն աւելի չգրել: — Նկատո-
ղութեան պիտի առնուին լեզուին մաքրութիւնը,
զաղափարներու շատութիւնը եւ կապակցութիւնը. —
Ամէն մէկ դպրոցի աշակերտք իրենց գրութիւնները
պարտին ցուցնել իրենց ուսոցչին, որ կարդալով
յարմար դատածները միայն կը զրկէ մեզի, քիչ մ'ալ
սրբազրուած: (Մեծ. Ուսուցիչները կը ներեն ան-
շուշտ մեզի՝ այս ժանձրութիւնը տալերնուս, բայց
յուսով ենք որ իրենք ալ չպիտի մերժեն օգնութիւն
մը ընծեռնած ըլլալ Հանրագիտակի զարգացման)

Մրցումին նիւթն է.

« Կ'ուզե՞ք շուտ մը մեծնալ հայրիկինդ պէս
ըլլալ, քե ոչ տղայ մնալ աւելի լաւ կը սեպե՞ք.
ի՞նչու համար »:

Սոյն հարցումներուն եւ մրցումին մէջ առաջին
հանդիսացողը Յունուարի 1ի թիւին հետ նուէր պիտի
ստանայ « Բուրաստան Մանկանցի » ամբողջ մէկ
տարեկանը:

ԼՈՒՅՈՒՄՆ 1 ՀԱՆԵԼՈՒԿԻ

Ե ա Ն ե ա
Վ Ա ն
Բ
Լ Ո Բ
Վ ո Լ կ ո
Մ ա տ է յ ր ա
Ն է կ ր Ո Բ ո ն տ
Կ ո ր Ն թ ո ս
Թ ի Դ թ է
Տ Ո ն
Ն
Ն Ա ն
Լ ո Բ է զ
Ա լ պ Ա ն ի ա
Լ ի վ ր Բ ո ւ լ
Թ ա մ ն ա Թ հ ա ր է ա

Առաջին հարցումին ճիշդ պատասխանած են:

1. Ս. Յակոբայ Որբանոցի ք.սրճ. կարգի աշա-
կերտք. — 2. Գ. Թ. Արիխանեան, — 3. Հաս-
կարազ Յերեկուկ: — 4. Վ. Լամշապուհ Աճէմեան,
— 5. Ա. Մ. Խաչէրեան, — 6. Սամուէլ Ալիբ-
սանեան, — 7. Եղուարդ Պետրոսեան, — 8. Հրանդ
Սիվասլեան: (Աշակերտք Անաթոլիա գոլէճին Մար-
գուանի): — 9. Յովսէփիկ Յակոբիկ (Հիւսէյնիկ)

2. ԱՆԳՂ ԻԱ

1. Օրիորդ Լուիզ Աճէմեան, Աշ. Արամեան Վրժ.
Գատըր Գիւղի: — 2. Գ. Թ. Արիխանեան, — 3. Հաս-
կարազ Յերեկուկ, — 4. Վ. Լամշապուհ Աճէմեան:
— 5. Ա. Մ. Խաչէրեան, — 6. Սամուէլ Ալիբ-
սանեան, — 7. Եղուարդ Պետրոսեան, — 8. Հրանդ
Ա. Սիվասլեան, 9. Յովսէփիկ, Յակոբիկ (Հիւսէյնիկ):

3. ՔԱՐՏԵՍ

1. Օրիորդ Լուիզ Աճէմեան, — 2. Գ. Թ. Արի-
խանեան, Աշ. Պերպէրեան վարժարանի: — 3. Հաս-
կարազ Յերեկուկ, — 4. Վ. Լամշապուհ Աճէմեան:

4

Որովհետեւ հեղուկ մը որչափ շուտ դո-
ւրջիւնայ, այնչափ ցրտութիւն յառաջ կը
բերէ: Հովը՝ քրտինքին դուրջիացումին
խիտ նպաստաւոր է. և ատկէ յառաջ յա-
ռաջ եկած ցուրտն ալ՝ կուրծքի ցաւ կուտայ:

5

Որովհետեւ բաց դոյն հագուստները տա-
քութիւնը կը վանեն, հայելիի մը նման կը
ցոլացնեն ու իրենց մէջ չեն անցնէր, մինչ-
դեռ սեւ դոյնով հագուստները՝ տաքութիւ-
նը կը ձգեն ու ներս կը քաշեն:

1. — Վ. Լամշապուհ Տ. Աճէմեան. — 2. Ե. Ե.:

Թէեւ վերոյիշեալներէն զատ կային մի
քանի ուրիշ լուծողներ ալ, բայց դժբաղ-
դաբար նամա կ'ներ կորսուած ըլլալուն չի
կրցինք հրատարակել:

ԱՐՏՈՒԱՏԷՐ — ԽՄԲԱՐԱՊԵՏ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԿՐԻՉ — ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ն Շ Ա Ն Կ. Պ Է Ր Պ Է Ր Շ Ա Ն



